Հաստատվել է Ուսանողական խորհրդի ընդլայնված
նիստում 2015 թվականի ապրիլի 29-ի նիստում
ՈՒԽ նախագահի՝ Ռ. Մինասյան

ՈՒԽ նախագահի ընտրության կարգը

1.1 ՈՒԽ նախագահը ընտրվում է սովորողների-ի կողմից:

1.2 ՈՒԽ նախագահի թեկնածու կարող է լինել համալսարանի այն առկա ուսուցման սովորողը, որը առնվազն մեկ ուսումնական կիսամյակ սովորել է համալսարանում, ինքնաառաջադրման միջոցով:

1.2 Սույն կանոնադրության ՈՒԽ նախագահի թեկնածուն ՈՒԽ ընդհանուր ժողովի կողմից սահմանված ձևով դիմում է ներկայացնում ՈՒԽ ընդհանուր ժողով:

1.3 ՈՒԽ նախագահի ընտրությունն անցկացվում է ՈՒԽ նախագահի լիազորությունների ավարտից 10 օր առաջ:

1.4 ՈՒԽ նախագահի ընտրությունները անցկացվում են աշխատանքային օրվա ընթացքում:

1.5 ՈՒԽ նախագահի ընտրությունների անցկացման համար ընտրություններից առնվազն 7 օր առաջ ձևավորվում է ընտրական հաշվիչ- հանձնաժողով:

1.6 հանձնաժողովը բաղկացած է 5 անդամից, որից՝ 1-ը նախագահում է ընտրական-հաշվիչ հանձնաժողովը, մյուսը անդամը գրանցում՝ և ընտրողներին քվեաթերթիկ է տրամադրում, երրորդ անդամն էլ պատասխանատու է քվեատուփի համար, իսկ երկուսն էլ համարվում են օժանդակող անձինք:

1.7 ընտրական-հաշվիչ հանձնաժողովի 2 անդամին նշանակում է ՈՒԽ նախագահը, 3-ին՝ ՈՒԽ ընդհանուր ժողովը:

1.8 ՈՒԽ նախագահի ընտրությունները կայանում են համալսարանում՝ ՈՒԽ նիստերի դահլիճում, կամ համալսարանի այն վայրում որից օգտվելը մատչելի է բոլոր քվեարկողների համար:

1.9 ՈՒԽ նախագահի ընտրությունները անցկացվում են քվեարկության միջոցով, որին մասնակցում են սոորողները:

1.10 Ընտրական-հաշվիչ հանձնաժողովի նախագահը քվեարկության օրը ժամը 10^{00}-ին հայտարարում է քվեարկության սկիզբը և թույլատրում է ընտրողների մուտքը քվեարկության սենյակ:

1.11 Քվեարկության ժամանակ յուրաքանչյուր ընտրող ստանում է քվեարկության մեկ քվեաթերթիկ:

1.12 Գրանցվելուց անմիջապես հետո վերցնում է քվեաթերթիկը և անցնում է քվեարկության խցիկ (կամ համապատասխան վայր (այսուհետ՝ խցիկ))՝ քվեարկելու:

1.13 Ընտրողը քվեաթերթիկը լրացնում է գաղտնի՝ քվեարկության խցիկում: Արգելվում է որևէ ձևով տեղեկանալ, թե ընտրողն ինչպես է քվեարկում:

1.14 Եթե ընտրողը կարծում է, որ քվեաթերթիկը սխալ է լրացրել կամ վնասել է, ապա կարող է դիմել ընտրական-հաշվիչ հանձնաժողովի նախագահին՝ նոր քվեաթերթիկ ստանալու համար: Ընտրական հաշվիչ հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ ընտրողին հատկացվում է նոր քվեաթերթիկ, ընտրողների ցուցակում կատարվում է համապատասխան նշում տվյալ ընտրողի անվան, ազգանվան դիմաց: Սխալ լրացված (վնասված) քվեաթերթիկը անմիջապես մարվում է:

1.15 Քվեաթերթիկում ընտրողը «V» նշում է կատարում այն թեկնածուի անվան դիմացի քառանկյունում, ում կողմ է քվեարկում:

1.16 Ընտրական-հաշվիչ հանձնաժողովի նախագահը ժամը 16^{30}-ին հայտարարում է քվեարկության ավարտի մասին և արգելում ընտրողների մուտքը քվեարկության սենյակ:

1.17 Ընտրական-հաշվիչ հանձնաժողովն ընտրական-հաշվիչ հանձնաժողովի նիստին ներկա լինելու իրավունք ունեցող անձանց ներկայությամբ (այս նիստին կարող է մասնակցել նաև թեկնածուն) սկսում է քվեարկության արդյունքների ամփոփման նիստը:

1.18 Քվեատուփում առկա բոլոր քվեաթերթիկները տեսակավորելուց հետո ընտրական-հաշվիչ հանձնաժողովի նախագահը ընտրական-հաշվիչ հանձնաժողովի անդամների ներկայությամբ մեկ առ մեկ հաշվարկում է սահմանված նմուշի անվավեր ճանաչված քվեաթերթիկների, ինչպես նաև յուրաքանչյուր թեկնածուին, կողմ քվեարկված քվեաթերթիկների թիվը: Հաշվարկված թվերը հրապարակվում են և արձանագրվում գրանցամատյանում:

1.19 Արդյունքներն ամփոփելիս չսահմանված նմուշի քվեարկության քվեաթերթիկները հաշվի չեն առնվում և չեն հաշվարկվում:

1.20 Քվեաթերթիկը անվավեր է, եթե՝

ա/ մեկից ավելի թեկնածուի օգտին նշումներ է ներառում.

բ/ որևէ նշում չի ներառում.

գ/ ակնհայտ խախտված է քվեաթերթիկում նշում կատարելու սահմանված ձևը: Սահմանված ձևի ոչ էական խախտումը չի կարող համարվել քվեաթերթիկի անվավերության հիմք, եթե ընտրողի մտադրությունը հստակ է և աներկբա:

2.1 Նոր ընտրված նախագահը իր պաշտոնը ստանձնում է նախքին նախագահի լիազորությունների դադարման օրը:

2.2 ՈՒԽ նախագահի լիազորությունները դադարում են՝

ա/ իր դիմումի համաձայն.

բ/ լիազորությունների ժամկետը լրանալու հիմքով.

գ/ համալսարանում սովորողի կարգավիճակը կորցնելու դեպքու.

2.3 ՈՒԽ նախագայի լիազորությունները դադարում են ավարտական կուրսի երկրորդ կիսամյակում:

2.4 Սովորողը վերը նշված կարգով կարող է ընդհանուր հիմունքներով մասնակցել ընտրություններին որպես թեկնածու, եթե շարունակում է համալսարանում կրթությունը: